ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

1 ապրիլի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

38
(3247)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

# ՓԱՇԻՆՅԱՆԻՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՉԵՆ ՏԵՍՆՈՒՄ

... 2026 թվականի հերթական ընտրություններին ընդառաջ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի հաստատման երկրորդ փուլի քվեարկությունը անցել է հետաքրքիր թվաբանական նրբություններով:

Շաբաթ-կիրակի կայացած քվեարկությանը 1080 պատվիրակներից, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, մասնակցել է 988 պատվիրակ: Արդյունքում Նիկոլ Փաշինյանն ստացել է 933 ձայն՝ ամենաբարձր արդյունքը:

Թվերը, սակայն, ունեն նաեւ իրենց «միջտողային» պատմությունը. 988 մասնակցած պատվիրակներից 55-ը փաստացի չեն «տեսել» Փաշինյանին վարչապետի թեկնածուի կարգավիճակում կամ պարզապես չեն կարողացել ճիշտ կողմնորոշվել ՔՊ-ական դեմքերով կազմված քվեաթերթիկում:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ մոտ երեք տասնյակ ՔՊ-ականներ վարչապետի թեկնածուի անվան փոխարեն քվեաթերթիկներում գրել են այլ անուններ՝ օրինակ Սուրեն Պապիկյան, Արարատ Միրզոյան, Տիգրան Ավինյան եւ այլք:

Այսպիսով, եթե հաշվենք սառը թվաբանությամբ՝ Փաշինյանը ստացել է 933 ձայն 988 մասնակցից, ինչը մոտ 94.4% է: Իսկ մնացած 5.6%-ը կա՛մ ստեղծագործաբար է մոտեցել քվեարկությանը, կա՛մ փորձել է հիշեցնել, որ նույնիսկ ներքին ընտրություններում մրցակցությունը երբեմն հայտնվում է այնտեղ, որտեղ պաշտոնապես այն նախատեսված չէ:

Փաստորեն, ՔՊ ներսում վարչապետի թեկնածուի հարցը, ըստ թվերի, մեծ մասամբ լուծված է, բայց քվեաթերթիկների «ազատ ստեղծագործողների» շնորհիվ թեման ստացավ այլ ենթաշերտ. որքանո՞վ է միակ թեկնածուի գաղափարը համադրելի բազմակարծության հետ թեկուզ կուսակցության ներսում:

Նիկոլ Փաշինյանի գլխավորած կառավարությունը, ըստ շրջանառվող տեղեկությունների, քաղաքական համաձայնություն է տվել, որպեսզի Ռուսաստանի Դաշնությունում վերջին տարիներին գտնվող եւ հեռավար քաղաքական ակտիվություն ցուցաբերող մի շարք գործիչներ հնարավորություն ստանան վերադառնալ Հայաստան եւ մասնակցել հունիսի 7-ին կայանալիք ընտրություններին՝ ինքնադրսեւորվելով ներքաղաքական դաշտում: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է հետախուզման մեջ գտնվող Արթուր Ասատրյանին (Դոն Պիպո), Միհրան Պողոսյանին (հանրային դաշտում առավել հայտնի որպես «Քեթրինի Միհրան»), ինչպես նաեւ Նիկոլ Փաշինյանի կողմից նախկինում պաշտոնազրկված պաշտպանության նախարար Արշակ Կարապետյանին եւ այլ գործիչների: Ըստ տեղեկությունների՝ նշված անձինք հնարավորություն կունենան վերադառնալ Հայաստան եւ քաղաքական մրցակցային դաշտում մասնակցել հունիսի 7-ին նախատեսված ընտրություններին՝ մրցելով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հետ: Ակնկալվում է, որ առաջիկայում նրանք կփորձեն շռնդալից մուտք գործել քաղաքական դաշտ՝ ակտիվ քարոզչական եւ հանրային գործունեությամբ: *(Կ)*

***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում***

ՔՊ-ական աղբյուրները «Ժողովուրդ» օրաթերթին փոխանցեցին, որ Նիկոլ Փաշինյանը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության վերջին նիստում հայտարարել է, որ ապրիլի 1-ից փոխում են քաղաքական գործելաոճը եւ այսուհետ խստագույնս պետք է պահպանեն ՔՊ էթիկայի եւ վարքականոնի սկզբունքները: Վարչապետը նաեւ հանձնարարել է թիմակիցներին որեւէ պարագայում չթիրախավորել քաղաքական ընդդիմախոսներին, լրագրողներին եւ քննադատներին, խուսափել վիրավորական եւ անհարգալից ձեւակերպումներից եւ քարոզարշավին ընդառաջ՝ հանդես գալ առավել զուսպ ու քաղաքակիրթ վարքով: Քարոզարշավը նախատեսվում է մեկնարկել մայիսի 7-ից: ՔՊ ներսում նման մոտեցման ձեւավորումը, ըստ քաղաքական շրջանակների, պայմանավորված է վերջին շրջանում արձանագրված հասարակական վերաբերմունքով եւ մի շարք աղմկահարույց միջադեպերով: Մասնավորապես, հանրային քննարկումների առարկա էր դարձել դեպքը, երբ եկեղեցում երիտասարդների մի խումբ անհանդուրժողական վերաբերմունք էր ցուցաբերել վարչապետի նկատմամբ, ինչպես նաեւ միջադեպը, երբ մի երիտասարդ թքել էր վարչապետի կորտեժի ուղղությամբ, ինչից հետո ձերբակալվել էր: Կուսակցության ներսում համոզմունք է ձեւավորվել, որ ընտրական փուլ մտնելու նախաշեմին անհրաժեշտ է նվազեցնել բեւեռացվածության մակարդակը եւ քաղաքական գործընթացները տեղափոխել առավել կոռեկտ ու ինստիտուցիոնալ դաշտ: *(Կ)*

Մարտի 27-28-ին տեղի ունեցան իշխող ՔՊ կուսակցության ներքին վարկանիշային ընտրությունները, որի ժամանակ ձեւավորվեց լավագույն 30-յակը: «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է, թե ինչ տեսք է ունենալու հունիսի 7-ին կայանալիք ՔՊ նախընտրական ցուցակի առաջին 50-յակը՝ ըստ ռեյտինգային քվեարկության եւ Ընտրական օրենսգրքի գենդերային պահանջների: Ամեն երրորդը պետք է կին լինի ընտրացուցակում: Նշենք, որ ըստ ներկուսակցական ընտրությունների արդյունքների՝ ՔՊ վարչապետի թեկնածուն Նիկոլ Փաշինյանն է: Ցուցակը կգլխավորի հենց ինքը՝ Փաշինյանը: Եւ այսպես՝ 1. Փաշինյան Նիկոլ, 2. Միրզոյան Արարատ, 3. Ավանեսյան Անահիտ, 4. Պապիկյան Սուրեն, 5. Պապոյան Գեւորգ, 6.Գալյան Սրբուհի, 7. Ռուբինյան Ռուբեն, 8. Ալեքսանյան Վահագն , 9. Ղազարյան Ալխաս, 10.Հարությունյան Արայիկ...

***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում***

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# «ՄԵՆՔ ՉԵՆՔ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԼՌԵԼ»

**ArmLur.am-ը զրուցել է Հայաստանի Հանրապետության «Համահայկական ճակատ» կուսակցության նախագահ Արսեն Վարդանյանի հետ:**

**-Պարոն Վարդանյան, Ազգային Ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի հետ միջադեպին ներկա էիք նաեւ Դուք: Կխնդրեմ ականատեսի աչքերով ներկայացնեք, թե ինչ տեղի ունեցավ: Կրկնե՞ք դեպքի մանրամասները:**

-Միկա Միքայելյանը իր ընկերների եւ զոհված ու անհայտ կորած զինծառայողների ծնողների հետ սկսել էր շարժում: Մենք՝որպես քաղաքական ուժ եւ նախկին զինվորականներ, աջակցել ենք այդ շարժմանը: Մեր աջակցությունը պայմանավորված էր նրանով, որ ծնողների պահանջները արդարացի էին:

Պահանջը հետեւյալն էր՝ մինչեւ քարոզարշավ սկսելը պետք է հանրությանը ներկայացվեն 44-օրյա պատերազմի քննիչ հանձնաժողովի հանգամանքները:

Ինչպե՞ս սկսվեց պատերազմը, պատերազմի ընթացքում ի՞նչ է տեղի ունեցել, ովքեր են պատասխանատուները, քանի որ հասարակության մեջ կան լուրջ կասկածներ եւ բազմաթիվ հարցեր:

Մենք երկու օր գտնվել ենք Բաղրամյան պողոտայի մուտքի մոտ: Այդ ընթացքում «Պատիվ ունեմ» խմբակցությունից Տիգրան Աբրահամյանը հանդես եկավ հայտարարությամբ, որը ընդունվեց ծնողների կողմից:

Նաեւ «Հայաստան» դաշինքից պատգամավորներ Աննա Գրիգորյանը, Ագնեսա Խամոյանը եւ այլ պատգամավորներ դուրս եկան ու զրուցեցին ծնողների հետ:

Իսկ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից ոչ ոք դուրս չէր գալիս, չնայած հիմնական խնդիրը հենց իրենց

հետ էր կապված, քանի որ իշխող ուժը նրանք են:

Երրորդ օրը որոշեցինք նաեւ Դեմիրճյան փողոցի մուտքի մոտ կանգնել եւ դուրս եկող պատգամավորներին հարցեր ուղղել:

**-ՔՊ բոլոր պատգամավորնե՞րը չէին արձագանքում, թե՞ կարող եք նշել կոնկրետ անուններ:**

-Միայն Բաբկեն Թունյանը կանգնեց եւ զրուցեց ինձ հետ: Ես նրան հարցրեցի՝որպես պատգամավոր՝աջակցո՞ւմ է ծնողների պահանջին: Նա պատասխանեց, որ այո, աջակցում է եւ հասկանում է նրանց պահանջը, ինչի համար ես անձամբ շնորհակալություն եմ հայտնել:

Մնացած պատգամավորները պարզապես անցնում էին՝ առանց կանգ առնելու կամ պատասխանելու:

**-Ալեն Սիմոնյանի հետ միջադեպը ինչպե՞ս սկսվեց եւ ինչպե՞ս հասավ հայհոյանքի մակարդակի:**

-Իմ գնահատմամբ՝ Ալեն Սիմոնյանը դուրս էր եկել սադրելու: Եթե նա պարզապես ուզում էր մուտք գործել Ազգային Ժողով, կարող էր դա անել այլ ճանապարհով, սակայն նա ընտրեց հենց այդ հատվածը, որտեղ ծնողներն ու ակցիայի մասնակիցները կանգնած էին:

Սկզբում մոտեցավ, բարեւեց, հետո ասաց, որ ժամանակ չունի եւ չի կարող պատասխանել հարցերին: Այդ ընթացքում Միկան ուղիղ եթերով հարց ուղղեց նրան՝ կարո՞ղ են զրուցել:

Ըստ ներկայացվածի՝ Ալեն Սիմոնյանը պատասխանել է արհամարհական տոնով, ինչից հետո խոսակցությունը վերածվել է վիճաբանության: Դրանից հետո արդեն սկսվել են փոխադարձ վիրավորանքներ, եւ լարվածությունը մեծացել է:

Ես մոտեցել եմ, որպեսզի բաժանեմ կողմերին, սակայն իրավիճակն ավելի է սրվել:

**-Ալեն Սիմոնյանը նշել է, որ Միկա Մարգարյանը պարբերաբար իր հասցեին ատելության խոսք է տարածել: Նման բան եղե՞լ է:**

-Ես կարող եմ հստակ ասել, որ նման բան չեմ տեսել: Միկա Մարգարյանը իմ ընկերների ցանկում է սոցիալական ցանցերում, եւ այս ընթացքում ես նմանատիպ հրապարակումներ չեմ նկատել:

**-Միկա Մարգարյանին այցելե՞լ եք, ինչպե՞ս է նա իրեն զգում, եւ ի՞նչ եք պատրաստվում անել այս միջադեպից հետո:**

-Այո՛, մենք ամեն օր կապի մեջ ենք: Նա իրեն լավ է զգում, շարունակում է իր ուղիղ եթերները եւ ակտիվությունը:

Շարժումը չի մարել: Մեր հիմնական պահանջը մնում է նույնը՝ հանրությանը հասանելի դարձնել 44-օրյա պատերազմի քննիչ հանձնաժողովի արդյունքները եւ ներկայացնել պատասխանատուներին:

Մենք չենք պատրաստվում լռել կամ հետ կանգնել մեր պահանջներից:

*Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ*

ՋԵՐՄ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ

**«Արմենպրես». Իրանին աջակցելն ու Իրանի կողմին լինելու հանգամանքը շատ կարեւոր է իրանցիների համար, եւ Հայաստանի կողմից ցուցաբերվող մարդասիրական օգնությունները եւս մեկ անգամ փաստում են հայ եւ իրանցի ժողովուրդների ջերմ բարեկամությունը:**

«Արմենպրես»-ի հետ բացառիկ զրույցում այդ կարծիքը հայտնեց ՀՀ-ում Իրանի արտակարգ եւ լիազոր դեսպան Խալիլ Շիրողլամին՝ այդ համատեքստում անդրադառնալով նաեւ Իրանի արտգործնախարար Աբբաս Արաղչիի գրառմանը:

Իրանի արտգործնախարար Աբբաս Արաղչին հայերենով գրառում էր զետեղել X-ի իր միկրոբլոգում՝նշելով, որ ՀՀ կառավարության եւ ժողովրդի աջակցությունը Իրանի ժողովրդին՝ իրանցիների տեղափոխման եւ մարդասիրական օգնության հարցերում, մեծ գնահատանքի է արժանի: Արաղչին հավելել էր, որ Իրանի եւ Հայաստանի դարավոր կապը դժվար պահին կրկին ցույց տվեց իր ամրությունը, եւ եղբայրական այդ քայլերը կմնան Իրանի ժողովրդի հիշողության մե

Դեսպան Շիրողլամին տեղեկացրեց, որ այդ գրառումից զատ, Աբբա Արաղչին հեռախոսազրույց է ունեցել իր գործընկեր Արարատ Միրզոյանի հետ՝ իր երախտագիտությունը հայտնելով Հայաստանի ժողովրդին ու կառավարությանը՝ համագործակցության ու աջակցության, Իրանի կողքին լինելու համար:

«Թե՛ պետական, թե՛ մասնավոր կառույցների կողմից ստացել ենք մարդասիրական օգնություններ եւ ուղարկել Իրան: Թեեւ այս պահին Իրանում իրավիճակը կրիտիկական չէ, սակայն մարդասիրական օգնությունները մեզ համար իսկապես գնահատելի են: Տառացիորեն երեկ մի խումբ մարդիկ եկել էին դեսպանատուն՝ իրենց հետ բերելով դեղորայքով լի արկղեր: Դա գեղեցիկ կերպով եւս մեկ անգամ փաստում է հայ եւ իրանցի ժողովուրդների ջերմ բարեկամությունը»,- ասաց Շիրողլամին: Դիվանագետը վստահեցրեց, որ Իրանում խուճապային տրամադրություններ չկան, ինչը վկայում է ժողովրդի հզոր կամքի մասին: Իրանում հանրային կյանքը շարունակվում է, խանութները գործում են անխափան, մթերային եւ այլ ապրանքների պակաս չկա: «Այդուհանդերձ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատերազմը շարունակվում է, ուստի կա նաեւ օգնությունների կարիք՝ հիմնականում դեղորայքի, բժշկական, օրթոպեդիկ սարքերի, որովհետեւ բազմաթիվ մարդիկ հայտնվելով փլատակների տակ՝ ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ: Պատերազմական շրջանում առաջնային օգնությունը յուրաքանչյուրին էլ պետք է»,- նշեց Շիրողլամին: Նրա խոսքով՝ քանի դեռ ընթանում են պատերազմական գործողություններ, դժվար է ամբողջությամբ գնահատել Իրանին հասցված վնասները: Դեսպանի պնդմամբ՝ եթե մի երկիր մյուսի նկատմամբ իրականացնում է ագրեսիա, ապա անպայման պետք է դատապարտվի միջազգային օրենքի համաձայն եւ փոխհատուցի պատճառած վնասները: «Մեր կառավարությունը մշակել է մի մեխանիզմ՝ ստեղծելով հատուկ կայք, որի միջոցով հաշվառվում են պատերազմական գործողություններից տուժած եւ սեփականություն կորցրած մարդիկ: Ամեն ինչ հայտարարագրվում է: Հսկայական չափով վնասվել են նաեւ հանրային հաստատությունները՝ կրթական ու մարզական համալրները, այլ կառույցները, որոնց վերականգնմամբ պետք է զբաղվի պետությունը: Բայց ամենից շատ մեզ ցավ են պատճառում մարդկային կորուստները: Պատերազմի մեկնարկից մինչ օրս արդեն զոհվել է ավելի քան 3000 մարդ, այդ թվում՝ կանայք ու երեխաներ: Ճանաչելով մեր ժողովրդին՝ վստահեցնում եմ, որ մարդիկ իրենց ուժեղ կամքի շնորհիվ հայրենի կառավարության հետ կվերականգնեն երկիրը»,-նշեց մեր զրուցակիցը: Դիվանագետը ցավով հայտնեց, որ կորուստներ ունեցավ նաեւ Իրանի հայկական համայնքը: Շատերի տներն ու բնակարանները փլուզվեցին ամերիկա-իսրայելական հարվածներից: «Կառավարությունը ձեռնարկել է համապատասխան քայլեր՝ նրանց կացարան տրամադրելու նպատակով: Այս օրերին մշտապես կապի մեջ եմ եղել Իրանում հայ Առաքելական եկեղեցու իրանահայոց թեմի ներկայացուցիչների եւ Իրանի խորհրդարանի հայ պատգամավորների հետ, քանզի շատ մտահոգված եմ նաեւ Իրանի հայկական համայնքի ներկա վիճակով: Ցավոք, մեր հայ հայրենակիցների շրջանում նույնպես ունեցանք ցավալի կորուստ: Սպահանում զոհվեց Հովհաննես Սիմոնյանը: Այդ կապակցությամբ հայտնել ենք մեր ցավակցությունները: Երեկ մեծ պատվով տեղի ունեցավ նրա հոգեհանգստյան արարողությունը, որին մասնակցեցին մահմեդական եւ քրիստոնեական համայնքների ներկայացուցիչները: Որպես դեսպան՝նույնպես իմ ցավակցական ուղերձը փոխանցեցի հայ համայնքին եւ անձամբ Հովհաննես Սիմոնյանի հարազատներին»,- ասաց Շիրողլամին:

## ՓԱՇԻՆՅԱՆԸ ԿԱՐԵՎՈՐԵԼ Է

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է ՀՀ-ում Եվրոպական միության քաղաքացիական առաքելության նորանշանակ ղեկավար Սատու Կոյվուին:

Վարչապետը շնորհավորել է տիկին Կոյվուին պատասխանատու պաշտոնը ստանձնելու առիթով եւ կարեւորել ԵՄ քաղաքացիական առաքելության գործունեությունը մեր երկրում: Նիկոլ Փաշինյանն ընդգծել է, որ ՀՀ-ԵՄ հարաբերություններն ունեն զարգացման դինամիկ բնույթ եւ ընդգծել ժողովրդավարական ինստիտուտների զարգացման գործում ԵՄ հետեւողական աջակցությունը:

Սատու Կոյվուն շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար, անդրադարձել ԵՄ քաղաքացիական առաքելության գործունեությանը: Նա վստահություն է հայտնել, որ ՀՀ Կառավարության գործընկերների հետ կշարունակվի սերտ համագործակցությունն ու ակտիվ երկխոսությունը:

Հանդիպման ընթացքում զրուցակիցներն անդրադարձել են Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության հաստատմանը, ինչպես նաեւ տարածաշրջանում կայունության ապահովմանը վերաբերող հարցերի:

## ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ԵՆ ՄԱՏՈՒՑԵԼ

Բելգիա-Հայաստան բարեկամական խմբի ներկայացուցիչները հարգանքի տուրք են մատուցել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին

Բելգիայի Թագավորության խորհրդարանի Բելգիա-Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Էլս Վան Հոֆի գլխավորած պատվիրակությունն ԱԺ Հայաստան-Բելգիա բարեկամական խմբի ղեկավար Արմեն Ռուստամյանի ուղեկցությամբ մարտի 31-ին այցելել է Ծիծեռնակաբերդի հուշահամալիր եւ հարգանքի տուրք մատուցել Սուրբ նահատակների հիշատակին:

Հյուրերը եղել են նաեւ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում, գրառում կատարել Պատվավոր հյուրերի հուշամատյանում:

## ԻՐԱՎԻՃԱԿ

### ՏՎՅԱԼՆԵՐ Է ՏՐԱՄԱԴՐԵԼ

Իսրայելը ԱՄՆ-ին հետախուզական տվյալներ է տրամադրել Հորմուզի նեղուցի եւ Խարկ կղզու վերաբերյալ՝Իրանում ամերիկյան զորքերի ցամաքային գործողության նախապատրաստման մասին լուրերի ֆոնին, գրում է Times of Israel թերթը՝ հղում անելով իսրայելական ռազմական աղբյուրներին:

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփն ավելի վաղ հայտարարել էր, որ Միացյալ Նահանգները կարող են փորձել իրենց վերահսկողության տակ վերցնել իրանական Խարկ կղզին:

«Իսրայելի պաշտպանության բանակը ԱՄՆ-ին հետախուզական տեղեկատվություն է տրամադրել նեղուցի եւ մերձակա կղզիների, ներառյալ՝ Խարկի վերաբերյալ»,- ասվում է հոդվածում:

Իրանի խորհրդարանի նախագահ Մոհամմադ-Բաղեր Ղալիբաֆն ավելի վաղ հայտարարել էր, որ ԱՄՆ-ն հրապարակավ ուղերձներ է հղում Իրանի հետ բանակցությունների մասին, սակայն գաղտնի պլանավորում է ցամաքային գործողություն:

### ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ

Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն եւ ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն հեռախոսազրույցի ընթացքում քննարկել են Կովկասում եւ Սեւծովյան տարածաշրջանում անվտանգությունը, հաղորդում է Պետդեպարտամենտը:

Անցյալ շաբաթ ԱՄՆ պետքարտուղարության Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով բյուրոյի ներկայացուցիչ Պիտեր Անդրեոլին ամերիկացի ներդրողների հետ այցելել է Թբիլիսի: Ուշադրության կենտրոնում էին Միջին միջանցքը եւ Վրաստանի դերը որպես տարածաշրջանային կապող օղակ եւ տրանսպորտային հանգույց:

«Պետքարտուղար Մարկո Ռուբիոն այսօր հեռախոսազրույց է ունեցել Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեի հետ: Նրանք քննարկել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցեր, այդ թվում՝ Կովկասում եւ Սեւծովյան տարածաշրջանում անվտանգությունը»,-հայտարարության մեջ նշել է Պետդեպարտամենտի խոսնակ Թոմի Պիգոտը:

### ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ

Իրանի ԱԳ նախարար Աբբաս Արաղչին հեռախոսազրույց է ունեցել Թուրքիայի ԱԳ նախարար Հաքան Ֆիդանի հետ: Իրանցի նախարարը հերքել է Թուրքիայի ուղղությամբ իրանական հրթիռների արձակման մասին լուրերը:«Իրանը հավատարիմ է բարիդրացիության սկզբունքին, Թուրքիայի ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության հարգելուն եւ պատրաստ է համատեղ տեխնիկական համագործակցության՝ ցանկացած հնարավոր հավակնություն ստուգելու համար»,- ասել է Արաղչին:

ԻՆՉ ՈՒՆԻ

# 17 ՀԱԶԱՐ ԴՈԼԱՐ ԱՎԱՆԴ, 22 ՀԱԶԱՐ ԴՈԼԱՐ ԿԱՆԽԻԿ

**ArmLur.am-ը ուսումնասիրել է Վիճակագրական կոմիտեի նախագահ Ստեփան Մնացականյանի հայտարարագիրը:**

Նախ նշենք, որ Ստեփան Մնացականյանը երկար տարիներ զբաղեցրել է պետական բարձր պաշտոններ: Նա 1996-1998 թվականներին եղել է ՀՀ Ազգային Ժողովի վերահսկիչ պալատի նախագահի տեղակալ, 1998-2000 թվականներին՝ ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի եւ վերլուծության նախարար, 2000-ից մինչեւ 2018 թվականը՝ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ, իսկ 2018 թվականի մայիսի 21-ից հանդիսանում է Վիճակագրական կոմիտեի նախագահ:

ArmLur.am-ը ուսումնասիրեց նրա հայտարարագիրը եւ պարզեց, որ Մնացականյանը հայտարարագրել է մեկ անշարժ գույք՝ Երեւանի Աջափնյակ վարչական շրջանում գտնվող հողամաս, որի բաժնային սեփականությունը կազմում է 1/20: Հողամասը ձեռք է բերվել 2020 թվականի հունիսի 22-ին՝նվիրատվության կարգով:

Տրանսպորտային միջոց նա չի հայտարարագրել:

Դրամական միջոցների մասով ArmLur.am-ը պարզեց, որ նա ունի զգալի ֆինանսական միջոցներ: Մասնավորապես, բանկային ավանդները կազմում են 17,000 ԱՄՆ դոլար եւ 15,000,000 դրամ: Բանկային հաշիվների մնացորդները կազմել են 3,187.58 ԱՄՆ դոլար, 2,182,028.3 դրամ եւ 6,759,636.8 դրամ: Կանխիկ դրամական միջոցները կազմում են 4,000 եվրո, 22,000 ԱՄՆ դոլար եւ 2,000,000 դրամ:

Ինչ վերաբերում է եկամուտներին, ապա ArmLur.am-ը ուսումնասիրեց եւ պարզեց, որ հաշվետու տարվա ընթացքում Ստեփան Մնացականյանի ընդհանուր եկամուտը կազմել է 23,362,590 դրամ: Այդ թվում՝ 18,437,592 դրամը՝ աշխատավարձ «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե»-ից, 4,116,550 դրամը՝ եկամտային հարկի վերադարձ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից, իսկ 808,448 դրամը՝ կենսաթոշակ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից:

Միեւնույն ժամանակ, Մնացականյանն ունի խոշոր վարկային պարտավորություն: Մասնավորապես, հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ նրա հիպոտեկային վարկի մնացորդը կազմել է 57,967,944.9 դրամ, որի առարկան հանդիսանում է հողամաս:

Բացի այդ, հայտարարագրում նշված է, որ նա նվիրատվության կամ օգնության կարգով տրամադրել է գույք, որի արժեքը կազմել է 10,000,000 դրամ:

ArmLur.am-ը ուսումնասիրեց նաեւ Ստեփան Մնացականյանի կնոջ՝ Սրբուհի Հովհաննիսյանի հայտարարագիրը: Պարզվեց, որ նրա միակ հաշվետու տարվա եկամուտը կազմում է 454,920 դրամ՝որպես կենսաթոշակ, սակայն նա ունի զգալի դրամական միջոցներ՝ բանկային ավանդներում 15,000,000 դրամ, բանկային հաշիվներում 1,502,219 դրամ եւ կանխիկ 350,000 դրամ ու 2,000 ԱՄՆ դոլար:

*ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

### ԱՇԽԱՐՀԻ ՉԵՄՊԻՈՆԻ ՈՐԴԻՆ Է

Կիրակի օրը եկեղեցու տարածքում Նիկոլ Փաշինյանի հետ տեղի ունեցած միջադեպից հետո իրավապահ մարմինները ձերբակալել են երկու երիտասարդ եղբայրների եւ ազատամարտիկի:

Երեկ քննիչները այցելել էին երիտասարդների բնակարան՝ իրականացնելու քննչական գործողություններ եւ խուզարկություն: Իհարկե, նրանց տանից որեւէ արգելված կամ գործի համար նշանակալի առարկա չի հայտնաբերվել: Սակայն ուշագրավ է, թե ով էր քննչական գործողություններ իրականացրած քննիչը:

ArmLur.am-ի՝ իրավապահ համակարգին մոտ կանգնած աղբյուրների փոխանցմամբ, նա բռնցքամարտի աշխարհի չեմպիոն Իսրայել Հակոբկոխյանի որդին է:

Հատկանշական է, որ Իսրայել Հակոբկոխյանը տարիներ շարունակ հայտնի է եղել իր ակտիվ քաղաքացիական դիրքորոշմամբ եւ տարբեր հասարակական հարցերի շուրջ մղած պայքարով:Մինչդեռ իրավապահ համակարգում նրա որդին ներգրավված է եղել դպրոցահասակ երիտասարդների նկատմամբ մեղադրանք առաջադրելու գործընթացում:

*Ք. Մ.*

### ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՆԻՆ

Հայ Յեղափոխական Դաշնակցության Բյուրոյի կողմից այսօր դեղեր եւ դեղորայքային պարագաներ են փոխանցվել ՀՀ-ում Իրանի դեսպանությանը:

ՀՅԴ Արցախի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Արա Պուլուզյանը Yerkir.am-ի հետ հարցազրույցում հայտնել է, որ մարդասիրական այս օգնությունը երախտագիտության դրսեւորում է Իրանի ժողովրդի հանդեպ, քանի որ Հայաստանի եւ Արցախի դժվարին օրերին հարեւան եւ բարեկամ Իրանը եղել է հայ ժողովրդի կողքին:

«Իհարկե, ոչ մի օգնություն էլ չի մեղմի բարեկամ Իրանի ժողովրդի ցավը, սակայն որպես մարդ, որպես բժիշկ, պարտավոր ենք ցավի ու վշտի մեջ գտնվող մարդկանց կողքին լինելու»,- ասել է «Տոնոյան» բժշկական կենտրոնի վիրաբույժ, 44-օրյայի մասնակից Հենրիկ Մարգարյանը՝ փաստելով, որ բժշկական պարագաներն ընտրելիս իրեն օգնել է պատերազմին մասնակից լինելու փորձառությունը:

Մարդասիրական օգնությունն ընդունել է ՀՀ-ում Իրանի փոխդեսպանը՝ շնորհակալություն հայտնելով այս դժվարին օրերին Իրանի ժողովրդի կողքին լինելու համար:

### ՎՃՌՈՐՈՇ ԿԼԻՆԵՆ

ԱՄՆ պաշտպանության նախարար Փիթ Հեգսեթը հայտարարել է, որ առաջիկա օրերը վճռորոշ են լինելու Իրանի համար՝ ընդգծելով, որ Իրանը սահմանափակ հնարավորություններ ունի ռազմական պատասխան տալու: Նրա խոսքով՝ Թեհրանը կարող է շարունակել հրթիռային հարվածները, սակայն ԱՄՆ-ն պատրաստ է դրանք խոցել: Հեգսեթը նաեւ նշել է, որ Դոնալդ Թրամփի հրապարակած տեսանյութում երեւում է, թե ինչպես են ամերիկյան ռմբակոծիչները հարվածում Սպահանի զինապահեստին: Նա ընդգծել է, որ Վաշինգտոնը սպասում է, որ Իրանը կընտրի բանակցությունների ճանապարհը, հավելելով, որ Թրամփը պատրաստ է համաձայնության, սակայն մերժման դեպքում ԱՄՆ-ն կուժեղացնի ռազմական գործողությունները: Հեգսեթի գնահատմամբ՝ ամերիկյան հարվածներն արդեն ազդում են իրանական բանակի մարտունակության վրա՝ հանգեցնելով բարոյահոգեբանական անկման եւ անձնակազմի պակասի: «Մենք հստակ գիտենք, թե ինչ են անում Ռուսաստանն ու Չինաստանը: Մենք դրանով զբաղվում ենք»,-ասել է Հեգսեթը:

«ՀԵՏՔ»

# ԻՆՉՊԵՍ ՉԲՈՍԱՅԳԻՆ ԴԱՐՁՐԻՆ «ՄԱԿՈՒԼԱՏՈՒՐԱ»

**«Հետքը» գրում է. «Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչ Բորյա Չիլինգարյանը որոշել է ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանի եւ այլ պաշտոնյաների վերաբերյալ «Հետքի» հրապարակման հիման վրա քրեական վարույթ չնախաձեռնել:**



Որոշման մասին քննիչը մեզ տեղեկացրել է փոստով ուղարկված նամակով: 10 էջանոց նամակի առաջին երկու էջում գրել է, թե ինչու չի նախաձեռնել քրեական վարույթը, իսկ մյուս 8 էջերում քրեական վարույթը կարճելու բուն որոշումն է, որը ստորագրությամբ հաստատել է նաեւ Գլխավոր դատախազության Հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազ Ա. Գեւորգյանը:

2026թ.-ի մարտի 4-ին «Հետքը» հրապարակել էր «Անշարժ գույք՝ զբոսայգու դիմաց. ՔՊ-ականների, Էդուարդ Բաբայանի եւ արտոնյալ գործարարի կապը» հոդվածը: Մենք ներկայացրել էինք Առինջ եւ Աբովյան համայնքների հողերի, այդ թվում՝ Աբովյանի քաղաքային զբոսայգու մի մասի սեփականաշնորհման եւ հետագայում Հայկ Կոնջորյանի հետ կապված գործարարի կողմից դրա կառուցապատման պատմությունները:

Մարտի 9-ին գրավոր հարցումով դիմել ենք գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին՝ տեղեկանալու՝ «արդյոք նշված հրապարակումը դատախազությունում ուսումնասիրվել է: Եթե այո, ապա ի՞նչ ընթացք է տրվել»:

Մարտի 18-ին մեր հարցումը հոդվածի հետ միասին փոխանցվել է Հակակոռուպցիոն կոմիտեի տնտեսական գործունեության դեմ ուղղված կոռուպցիոն բույթի հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Բորյա Չիլինգարյանին:

Մարտի 19-ին քննիչը որոշել է քրեական վարույթ չնախաձեռնել:

Մարտի 20-ին Գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազ Ա.Գեւորգյանը հաստատել է քրեական վարույթ չնախաձեռնելու որոշման օրինականությունը:

Քրեական վարույթ չնախաձեռնելու որոշումը, ինչպես վերեւում նշեցինք, բաղկացած է 8 էջից: Դրանից 6.5 էջում արտատպված է «Հետքի» հոդվածի մեծ մասը: Քրվարույթ չհարուցելու 1.5 էջանոց փաստաթղթում քննիչը գրել է, որ լրագրողական հոդվածի ուսումնասիրությունից պարզվել է, որ այն չի պարունակում այնպիսի տվյալներ, որին կարող էր տրվել Քրեական օրենսգրքով սահմանված որեւէ արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական, որի պատճառով էլ որոշել է քրեական վարույթ չնախաձեռնել:

Այս որոշումը հիմնավորելու համար քննիչը նշել է, որ հոդվածում ներկայացվածը բազմաշերտ իրավական հարաբերություններ են (ձեռնարկատիրություն, անշարժ գույքի օտարում եւ այլն):

«Հաղորդմամբ արձանագրված իրադարձություններին վերաբերելի փաստական տվյալները չեն հաղթահարում քրեական վարույթի նախաձեռնման համար անհրաժեշտ նվազագույն իրավական շեմը, դրանք բովանդակում են առերեւույթ հանցանքների հնարավոր կատարման վերաբերյալ կասկածներ, միաժամանակ՝ դրանց ստուգման ընթացքում առանձին հանգամանքների վերաբերյալ ձեռքբերված հակասական տվյալներ (օրինակ՝ հաղորդմամբ ներկայացված՝ որպես զբոսայգու տարածք նկարագրված օտարված հողամասի՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում երբեւէ ընդգրկված չլինելու վերաբերյալ ՏԻՄ պաշտոնական գրություն եւ այլն), նաեւ բացառապես գործարքի կողմերի փոխկապակցվածությունից բխեցվող հետեւություններ, ուստի տվյալ իրավիճակում քրեադատավարական արձագանքը կհակասի քրեական իրավունքի սուբսիդիար բնույթին եւ դրա գործառութային նպատակին՝ հանգեցնելով հանրային իրավահարաբերությունների անհիմն քրեականացման»,- եզրահանգել է Հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնյան՝ այդուհանդերձ հոդվածն ուղարկելով Կոմիտեի մեկ այլ ստորաբաժանում՝ օպերատիվ ստուգման:

Զարմանալիորեն, «Հետքի» հոդվածում նա չի տեսել կամ չի ցանկացել տեսնել Աբովյանի զբոսայգու սեփականաշնորհման վերաբերյալ գլխավոր փաստերից մեկը՝ Կառավարության համապատասխան որոշումը, որով հողամասը հանդիսացել է զբոսայգի (Կառավարության 2007 թ.-ի որոշման 1-ին հավելվածում հստակ երեւում է, որ 2012 եւ 2016 թվականներին Էդուարդ Բաբայանի ընտանիքի անդամների գնած հողամասը ներառված է եղել զբոսայգիների ցանկում: Այդ հողամասը եւ Աբովյանի կենտրոնական զբոսայգին առանձնացված են նույն նշումով):

Զբոսայգու հանգամանքն ապացուցվում է նաեւ արբանյակային պատկերներով, որոնք կցված են հոդվածին: Հավանաբար, Հակակոռուպցիոն կոմիտեում չեն կարողանում օգտվել Google Earth առցանց անվճար գործիքից, որով հնարավոր է տեսնել երկիր մոլորակի վրա տարբեր տարիների իրականացված արբանյակային լուսանկարները: Աբովյանի զբոսայգու սեփականաշնորհման դեպքը մեր հրապարակման մեջ տեղ գտած փաստերից ընդամենը մեկն է:

Ի դեպ, քրեական վարույթ չնախաձեռնելու որոշումը հաստատելով՝ դատախազության համապատասխան պաշտոնյան իր հերթին օրինականացրել է Հակակոռուպցիոն կոմիտեի որոշումը:

***Հ.Գ. Որոշումը կայացվել է մարտի 19-ին, երբ վարչապետ Նիկոլ Փաշինյանը լրագրողների հետ ճեպազրույցի ժամանակ, վրդովվելով ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանի վերաբերյալ լրագրողի հարցից, հայտարարեց. «Ուղարկեմ այդ փաթեթը, մնացած տոնականերով մակուլատուրան, ուղարկեմ իրավապահ մարմիններին»:***

## ՀՐԴԵՀԻ ԱՀԱՔԱՆԳ

Մարտի 31-ին, ժամը 08:15-ին Սյունիքի մարզային օպերատիվ կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Սիսիան քաղաքի Շիրակի փողոցում գտնվող խանութներից մեկում: Դեպքի վայր է մեկնել ՆԳՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից երկու մարտական հաշվարկ: Պարզվել է, որ հրդեհը բռնկվել է մթերային խանութում: Հրդեհը մեկուսացվել է ժամը 08:47-ին, մարվել՝ 09:17-ին: Այրվել են տնտեսական իրեր եւ սննդամթերք: Հրդեհի հետեւանքով մասամբ փլուզվել է միջնապատը եւ ձեւախախտվել ճակատային պատից մի հատված: Հրշեջ-փրկարարներին հաջողվել է կանխել հրդեհի տարածումը:

## ԼՈՒՐԵՐ

### ՄԵՂԱԴՐԱՆՔ ԵՆ ԱՌԱՔԱԴՐԵԼ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Սուրբ Աննա եկեղեցում միջադեպի մասնակից Դավիթ եւ Միքայել Մինասյան եղբայրներին տեղափոխել են Երեւան քաղաքի քննչական վարչություն:

Հիշեցնենք,որ Սուրբ Աննա եկեղեցում Ծաղկազարդի պատարագի ընթացքում վարչապետը շքախմբով մտել է եկեղեցի, գրավել ներկաների ուշադրությունը, ինչից դժգոհել են ներկաները: Դավիթ եւ Միքայել Մինասյան եղբայրներից մեկն ասել է. «տենց չնայես»: Կադրեր կան, որ վարչապետի թիկնազորի ներկայացուցիչներից մեկը հարվածել է երիտասարդներից մեկի ծնոտին, ինչից հետո սկսվել է քաշքշուկ: Մոտ մեկ ժամ անց եկեղեցու բակից ոստիկանները բիրտ ուժով բերման ենթարկեցին Դավիթ եւ Միքայել Մինասյան եղբայրներին, ինչպես նաեւ Հայ ազգային ճակատի հիմնադիր, քաղաքական գործիչ Գեւորգ Գեւորգյանին:

Սուրբ Աննա եկեղեցու միջադեպի գործով ձերբակալված Միքայել Մինասյանը դուրս եկավ քննչական վարչությունից. նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը: Այս մասին հայտնել է փաստաբանը: «Երկուսն էլ ունեն մեղադրյալի կարգավիճակ, մեղադրանք առաջադրվել է»,-լրագրողներին ասաց փաստաբան Վարդուհի Էլբակյանը: Միքայել Մինասյանը լրագրողներին ասաց, որ լավ է, իր հանդեպ լավ են վերաբերվել, բայց խնդրեց այլ հարցեր չտան:

2026 թվականի մարտի 29-ին Սուրբ Աննա եկեղեցում տեղի ունեցած միջադեպի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում Դ.Մ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 1-ին մասով (խուլիգանությունը) եւ 452-րդ հոդվածի 3-րդ մասով (պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելը), Մ.Մ.-ի նկատմամբ՝ 46-297-րդ հոդվածի 1-ին մասով (խուլիգանությանն աջակցելը) եւ 46-452-րդ հոդվածի 3-րդ մասով (պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելուն աջակցելը) եւ Գ.Գ.-ի նկատմամբ՝ 46-297-րդ հոդվածի 1-ին մասով (խուլիգանությունը կազմակերպելը) եւ 46-452-րդ հոդվածի 3-րդ մասով (պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելը կազմակերպելը):

### ԱՊՕՐԻՆԻ

ՊԾ Երեւան քաղաքի գնդի 3-րդ գումարտակի 2-րդ վաշտի ծառայողները մարտի 26-ին՝ ժամը 3.40-ին, Կոմիտասի պողոտայի հասցեներից մեկի մոտ հայտնաբերել, ապօրինի զենք-զինամթերք պահելու եւ կրելու կասկածանքով ձերբակալել եւ «Մերսեդես» մակնիշի մեքենայով հանդերձ՝ Համայնքային ոստիկանության Արաբկիրի բաժին են տեղափոխել Արագածոտնի մարզի բնակիչ՝ 22 եւ 34 տարեկան 3 երիտասարդի: 34-ամյա երիտասարդի անձնական խուզարկությամբ հայտնաբերվել են լիցքավորված ատրճանակ եւ գաղտնի փականով ծալովի դանակ: Երիտասարդները կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել են նախաքննական մարմին:

● *Մարտի 27-ից 30-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է բնակարանային գողության 2 դեպք:*

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

## ՔԱՎՈՐ ՄԱՐԶՊԵՏԸ ՉԳԻՏԻ՞ ԹԻՎԸ

44-օրյա պատերազմից որոշ ժամանակ անց՝ 2021 թվականին, Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել Արցախում տեղի ունեցած պատերազմի ընթացքում Տավուշի մարզից զոհերի, գերիների եւ անհետ կորածների թվի մասին: Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արման Գեւորգյանի անունից ուղարկված գրավոր պատասխանում նշված էր, որ 2020 թվականի աշնանը Արցախում տեղի ունեցած պատերազմի զոհերի, գերիների եւ անհետ կորածների վերաբերյալ պաշտոնական տեղեկատվություն Տավուշի մարզպետարանում առկա չէ: Այն ժամանակ հավաստի աղբյուրներից տեղեկացա, որ 2020թ. աշնանը Արցախում տեղի ունեցած պատերազմում զոհվել է Տավուշի մարզի 116, անհետ կորել՝ 14 բնակիչ: Հայտնի չէր, թե այդ 14 անհետ կորածների մեջ Ադրբեջանում գտնվող գերի կա, թե ոչ: Այն ժամանակ Տավուշի մարզպետարանի պաշտոնյան, որը չցանկացավ, որ իր անունը հրապարակվի, լրագրողիս հայտնեց, որ կառավարությունը ներքին կարգով, բանավոր հրահանգել է մարզպետարաններին, որպեսզի դրանք զոհվածների եւ անհետ կորածների թվեր չհրապարակեն: Հետո Տավուշի մարզից 14 անհետ կորածներից մի մասի մարմինները հայտնաբերվեցին, նրանք հուղարկավորվեցին:

2026 թվականի մարտի 5-ին մարզպետ Հայկ Ղալումյանին նույն թեմայով նոր հարցում եմ արել. «44-օրյա պատերազմում Տավուշի մարզի քանի՞ բնակիչ է զոհվել, քանի՞ անձ է համարվում անհետ կորած»: Այս ագամ Տավուշի մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Տեղեկատվությունը ստանալու համար առաջարկում ենք դիմել ՀՀ պաշտպանության նախարարություն»: Հայկ Ղալումյանը 2021թ. ապրիլի 8-ին իր դասընկեր, իր սանիկ, վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ նշանակվել է Տավուշի մարզպետ: 5 տարի որպես Տավուշի մարզպետ պաշտոնավարելով, պետական բյուջեից բարձր ռոճիկ եւ մեծ պարգեւավճարներ ստանալով՝ Հայկ Ղալումյանը չի՞ ցանկացել իմանալ, թե Տավուշի մարզից քանի անձ է պատերազմում զոհվել հանուն հայրենիքի, քանիսն է համարվում անհետ կորած: Եթե մարդասիրական մի կազմակերպությունից զանգահարեն մարզպետ Ղալումյանին եւ ասեն, որ իրենք 44-օրյա պատերազմում զոհված ու անհետ կորած տավուշցիների ընտանիքներին մարդասիրական օգնություն են հատկացնում, հարցնեն՝ որքան է նրանց թիվը, մարզպետը ի՞նչ է պատասխանելու, հավանաբար պատասխանելու է՝ դիմե՛ք Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն, իմացե՛ք:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*

ԲԱՑ ՆԱՄԱԿ

## «Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆՆ ՕԳՆՈՒՄ Է ԱՄՈՒՍՆՈՒՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ»

**ArmLur.am-ը բաց նամակ էր ստացել ՀՀ քաղաքացուց, որտեղ նշվում էր.**

«Առողջապահության նախարարության աշխատակից եմ: Անահիտ Ավանեսյանի վերաբերյալ արդեն հայտնի փաստերից բացի, նկատել եմ նոր սխեմաներ, կապված իր ամուսնու հետ: Ուզում եմ դիմել ձեզ մի խնդրանքով, միգուցե դուք կարողանա՞ք օգնել, տարածելով սա: Ուղղակի այն ինչ կատարվում է մեր նախարարությունում, անցել է բոլոր սահմանները: Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը վերածել է նախարարությունը կոռումպացված ընտանեկան բիզնեսի: Պետպատվերների մեծամասնությունն իրականացվում է իր մորը պատկանող «Արֆարմացիա» ընկերության կողմից: Վերջին տարվա ընթացքում ավելի քան 83 միլիոն դրամի պայմանագիր է կնքվել: Գիտեմ, որ վերջերս ՔԼՄ-ներն արդեն անդրադարձել են տվյալ իրավիճակին, բայց ցավոք անգամ այդ հանրային արձագանքը ոչինչ չի փոխել:

Միեւնույն է ամեն ինչ արվում է սեփական բիզնես-շահերից ելնելով, ինչն ազդում է թե դեղորայքի, թե սպասարկման որակի վրա: Բացի այդ, իր լծակներն օգտագործելով, Անահիտ Ավանեսյանն օգնում է ամուսնուն պատկանող ընկերություններին արտոնյալ դիրք ունենալ շուկայում: Օրինակ՝ սարքավորումների մատակարարման շրջանակներում 53,4 միլիոն դրամի չափով հարկային արտոնություններ եւ պետության կողմից ավելի քան 25 միլիոն դրամ դրամաշնորհներ ստանալ, առանց ինչ որ հանգամանքի:

Խնդրում եմ հրապարակել վերոնշյալ տեղեկությունը, քանի որ մենք չենք ընդունում այն, որ մեր ժողովուրդը պետք է տուժի նախարարի սեփական շահերի պատճառով եւ հոգնել ենք աշխատել ընտանեկան բիզնեսի առաջխաղացման նպատակով, մենք ուզում ենք արդար Առողջապահության նախարարություն եւ արդար ղեկավար:

Հղումներն ամրացնում եմ նամակին՝

1. 1. «Արֆարմացիա» ընկերության վերջին տարում կնքված որոշ պայմանագրեր՝

3. Ինչպես նաեւ կցում եմ պետական պայմանագրերի գրանցման համակարգից 4 դրամաշնորհների լուսնկարը»:

Մենք այս բաց նամակի վերաբերյալ դիմեցինք ՀՀ առողջապահության նախարարի մամուլի խոսնակին.

«Շահերի հնարավոր բախման համատեքստում լրատվամիջոցների մեր գործընկերների հարցումներին ի պատասխան ուղղակի կներկայացնեմ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությունը, որն ի դեպ, հենց նախարարի դիմումի հիման վրա է ներկայացվել:

«Հանձնաժողովը ուսումնասիրության արդյունքում արձանագրել է, որ Առողջապահության նախարարությունում, նախարարը, ի պաշտոնե, չի հանդիսանում գնման գործընթացում ներգրավված անձ կամ պայմանագրի կողմ, ինչպես նաեւ չի ձեւավորում գնահատող հանձնաժողով կամ այլ կերպ մասնակցում գնման գործընթացի կազմակերպմանը: Հետեւապես շահերի բախման մասին խոսք գնալ չի կարող:

Դուք գիտեք, որ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 5-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր գնման գործընթացի համար պատասխանատու է պատվիրատուի ղեկավարը:

Պատվիրատուի ղեկավարը սահմանում է գնումները համակարգող, պատասխանատու ստորաբաժանում, գնահատող հանձնաժողով, գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցը նաեւ կնքում է պայմանագիրը եւ հաստատում է գնման ընթացակարգի արձանագրությունը:

Նույն կարգի 6-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուի ղեկավարը պետական կառավարման մարմնում գլխավոր քարտուղարն է կամ վերջինիս լիազորությամբ գլխավոր քարտուղարի տեղակալը:

Առողջապահության նախարարությունն իր կարիքների համար անհրաժեշտ բոլոր ապրանքների, դեղերի գնման ընթացակարգերը կազմակերպում եւ իրականացնում է բացառապես մրցակցային եղանակով մրցույթներ հայտարարելու միջոցով: Ընդ որում, վերջիններիս մասին ողջ տեղեկատվությունը հասանելի է ՀՀ Ֆինանսների նախարարության գնումների համակարգում gnumner.am»:

*ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ԱՄԵՆԱԱՆՎՏԱՆԳ ԵՐԿՐՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ Է

«Ահաբեկչության գլոբալ ինդեքս 2026»-ը (GTI) ներկայացրել է երկրների հերթական վարկանիշային աղյուսակը՝ ըստ ահաբեկչական սպառնալիքի մակարդակի:

Նախորդ տարվա զեկույցի համաձայն՝ Հայաստանը զբաղեցնում էր 82-րդ տեղը: 2026 թվականին երկիրն իջել է 81-րդ հորիզոնական, ինչը թույլ է տալիս այն դասել աշխարհի ամենաանվտանգ երկրների շարքին ըստ այս ցուցանիշի (1-ից 100 բալանոց սանդղակով, որտեղ ավելի բարձր դիրքերը համապատասխանում են սպառնալիքի նվազագույն մակարդակին):

Ահաբեկչական ակտիվության ամենաբարձր մակարդակ ունեցող պետությունների թվին են դասվել՝ Պակիստանը (8,574), Բուրկինա Ֆասոն (8,324) եւ Նիգերը (7,816), իսկ ամենացածրը՝ Ուրուգվայը, Ջիմբաբվեն, Վիետնամը:

Վարկանիշում ներկայացված են նաեւ՝ Սիրիան (7,38)- 6-րդ տեղ, Իսրայելը (6,79)- 10-րդ, Աֆղանստանը (6,678)- 11-րդ, Հնդկաստանը (6,428)- 13-րդ, Ռուսաստանը (5,593)- 17-րդ, Իրանը (5,477)- 18-րդ, ԱՄՆ-ն (4,521)- 28-րդ, Գերմանիան (4,447) - 29-րդ, Ֆրանսիան (3,224)- 35-րդ, Թուրքիան (3,212)- 36-րդ, Չինաստանը (1,311)- 54-րդ, Շվեյցարիան (0,749)- 67-րդ, Միացյալ Արաբական Էմիրությունները (0,749)- 68-րդ, Վրաստանը (0,506)- 77-րդ եւ Ադրբեջանը (0,123)- 93-րդ տեղ:

«Ահաբեկչության գլոբալ ինդեքսի» ցուցանիշը ձեւավորվում է մի շարք հիմնավորումների հիման վրա, ներառյալ՝ ահաբեկչական միջադեպերի քանակը, զոհերի թիվը, հետեւանքների ծանրությունը, պատանդառության դեպքերը, ահաբեկչության դեմ պայքարի եւ նմանատիպ հանցագործությունների քննության արդյունավետությունը, ինչպես նաեւ այլ պարամետրեր:

## ՄԵՂԱԴՐՈՒՄ Է

Ադրբեջանի ԱԳՆ-ն այսօր հանդես է եկել 1918-ի մարտի 31-ին Բաքվում տեղի ունեցած դեպքերի մասին հայտարարությամբ՝ պնդելով, որ 108 տարվա վաղեմության այդ իրադարձությունների ընթացքում «արմատական հայկական խմբավորումները ադրբեջանցիների զանգվածային սպանություններ են իրագործել»:

Ադրբեջանի ԱԳՆ-ն այսօր տարածած հայտարարության մեջ պնդում է, որ 1918 թվականի իրադարձությունների ընթացքում Բաքվի կոմունային եւ Դաշնակցությանը ենթակա հայկական ջոկատները իբր տասնյակ հազարավոր ադրբեջանիցների են սպանել:

Ադրբեջանի արտաքին քաղաքական գերատեսչության պնդմամբ՝ «ցեղասպանության» ակտեր իրագործվել են ոչ միայն Բաքվում, այլեւ մի շարք այլ քաղաքներում: Դրանց թվում Ադրբեջանի ԱԳՆ-ը հիշատակել է նաեւ Երեւանը՝ օգտագործելով Հայաստանի մայրաքաղաքի ադրբեջանական անվանումը՝ Իրեւան:

«20-րդ դարասկզբի ցեղասպանության այս արյունալի քաղաքականությունը շարունակվել է նաեւ նույն դարի վերջում՝ համակարգային բնույթ ստանալով: Դրա վկայություններն էին ներկայիս Հայաստանի տարածքից ադրբեջանցիների զանգվածային տեղահանությունը, օկուպացիայի տարիներին իրականացված զանգվածային սպանությունները՝ հատկապես Խոջալուի ցեղասպանությունը, այլ ռազմական հանցագործությունները», - նշված է Ադրբեջանի ԱԳՆ հայտարարության տեքստում:

● *Մարտի 27-ից 30-ը բացահայտվել է թմրանյութի իրացման, անհետաձգելի միջամտության որոշման պահանջները չկատարելու 3-ական դեպք:*

ԼՈՒՐԵՐ

## «ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ը ԿՄԱՍՆԱԿՑԻ ԴԱՇԻՆՔՈՎ

Երեկ «Ուժեղ Հայաստան» կուսակցության խորհրդի անդամ Նարեկ Կարապետյանը դաշինքի ստեղծման վերաբերյալ հուշագիր է ստորագրել «Նոր դարաշրջան» կուսակցության նախագահ Հարություն Հարությունյանի եւ «Միավորված հայեր» կուսակցության պատվավոր նախագահ, լիազոր ներկայացուցիչ Նաիրի Սարգսյանի հետ:

Հուշագիրը ստորագրած քաղաքական կուսակցությունները հայտարարում են, որ միավորվում են «Ուժեղ Հայաստան» կուսակցության քաղաքական օրակարգի եւ նախընտրական ծրագրի շուրջ եւ գործելու են պետականության ամրապնդման, ազգային եւ հոգեւոր արժեքների պաշտպանության, արդյունավետ եւ հաշվետու կառավարման, տնտեսական կայուն զարգացման, իրավական եւ սոցիալական արդարության եւ համերաշխության ապահովման սկզբունքների վրա:

Նշվում է, որ ձեւավորվող դաշինքի գաղափարական հիմքը համահունչ է Սամվել Կարապետյանի կողմից առաջ քաշված ազգային-պետական եւ արժեքային մոտեցումներին, եւ կողմերը պատրաստակամություն են հայտնում համախմբվել այդ գաղափարական հենքի շուրջ:

Քաղաքական կուսակցությունները գալիք ընտրություններին կմասնակցեն միասնական քաղաքական դաշինքով՝ «Ուժեղ Հայաստան Սամվել Կարապետյանի հետ»: *(Գ)*

**Հայտարարություն**

Ես՝ Վիկտորյա Նորայրի Սարհատյանս, համաձայն հրաման թիվ 97-ի ընդունված 28.08.2018թ.՝ ընդունվել եւ սովորել եմ Արմավիրի պետական քոլեջում: Կորցրել եմ «Արմավիրի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի «Դեղագործություն» բաժնի դիպլոմս: Ուսումս ավարտել եմ՝ համաձայն հրաման թիվ 124-ի՝ ընդունված 25.06.2021թ-ին: Ստացել եմ АК 181362 համարի դիպլոմ:

09.11.2023թ-ից «Արմավիրի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի իրավահաջորդ է հանդիսանում «Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը:

C360 ՊՐԵՄԻՈՒՄ

Գ

# ՃԿՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Յուրահանչյուր ճամփորդություն նոր փորձառություն է, էմոցիաներ եւ բացահայտումներ: Ճամփորդությունը սկսվում է օդանավակայանից եւ ավարտվում օդանավակայանով: Օդանավակայանում անցած ժամանակը եւ սպասարկման որակը դարձել են տուրիստական փորձառության անբաժանելի մասը, իսկ հարմարավետությունը՝ բնական պահանջ: Business Lounge-ների նկատմամբ հետաքրքրությունն աճում է:**

2025-ին Priority Pass-ի 14 միլիոնից ավելի անդամների 73%-ը տարվա ընթացքում գոնե մեկ անգամ օգտվել է Business Lounge-ներից:

Միաժամանակ, OAG Aviation-ի եւ Collinson-ի համատեղ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանց զգալի մասը՝ մոտ 47%-ը, վերջին 12 ամիսներին դրանցից չի օգտվել կամ օգտվել է միայն մեկ անգամ, 31%-ը՝ 4 կամ ավելի անգամ: Business Lounge տարվա մեջ 15 եւ ավելի մուտք գրանցել է միայն 3-5%-ը:

Շուկայում առկա նման առաջարկներից ինչպե՞ս ընտրել օպտիմալը՝ ստանալով անվճար մուտքերի անհրաժեշտ քանակ լավագույն պայմաններով:

*Հարմարավետություն՝ C360 պրեմիում փաթեթներով*

C360 պրեմիում փաթեթները մշակվել են համաշխարհային միտումների հիման վրա, այդ թվում՝ հնարավորություն տալով ընտրություն կատարել՝ ելնելով Business Lounge անվճար մուտքերի քանակից եւ արագ անցման ուղու (Fast Track) հասանելիությունից:

Անվճար մուտքի հնարավորության առաջարկներ շուկայում շատ կան, սակայն ինչու՞ ընտրել C360 պրեմիում փաթեթ, որո՞ն է Կոնվերս Բանկի առաջարկի տարբերությունը կամ առավելությունը:

Բանկն առաջարկում է ճկունություն: Պատկերացրեք իրավիճակ. Դուք ճամփորդելու պլաններ ունեք եւ հետաքրքրվում եք հասանելի առաջարկներով, որոնք սովորաբար սահմանափակվում են մեկ քարտով եւ միայն դրա շրջանակում հասանելի հնարավորություններով: Ի՞նչ անել, ինչպե՞ս օգտվել Business Lounge-ից հնարավորինս լավ պայմաններով: Պատասխանը մեկն է, դառնալ Կոնվերս Բանկի C360 պրեմիում փաթեթի օգտատեր եւ ստանալ անհամեմատ ավելի շատ առաջարկներ եւ հնարավորություններ Ձեզ եւ Ձեր ուղեկիցների համար.

Ձվարթնոց օդանավակայանի Fast Track + Business Lounge ծառայության տարեկան 2-20 անվճար վաուչեր Բանկի ակտիվ հաշվետեր հաճախորդներին: Առաջարկից օգտվելու համար պարզապես անհրաժեշտ է մուտքին նախորդող 30-օրյա ժամանակահատվածում կատարել հանրագումարային 000 դրամը/համարժեք արտարժույթը գերազանցող անկանխիկ գնումներ: Վաուչերները հնարավոր է ձեռք բերել Converse Mobile հավելվածով:

Մինչեւ 5 C360 Visa եւ C360 Mastercard պրեմիում քարտ մեկ փաթեթում՝ մեկ ֆիքսված վճարով, այդ թվում՝ կից քարտ Ձեր ընտանիքի անդամի անունով թե՛ տեղական եւ թե՛ միջազգային օդանավակայանների Business Lounge եւ Fast Track ծառայություններից օգտվելու հնարավորությամբ, ընդհուպ՝ անսահմանափակ մուտքերով:

Իսկ եթե անգամ սպառվել են հասանելի անվճար վաուչերները, Դուք հնարավորություն ունեք ձեռք բերել վաուչերներն արտոնյալ սակագներով:

Ընդունեք՝ շուկայում առկա անվճար առաջարկները սահմանափակ են եւ միանման, իսկ տարբեր հնարավորությունների համադրումը՝ շահավետ. պարզապես անհրաժեշտ է ընտրել Ձեր կենսակերպին առավել համապատասխան C360 փաթեթ եւ օգտվել բազմակողմանի հնարավորություններից:

Բայց առավելությունները սրանով չեն ավարտվում, քանի որ C360-ը Ձեզ հետ է ճամփորդության պլանավորումից մինչեւ իրագործում, եւ Բանկի C360 պրեմիում փաթեթների օգտատերերը, բացի բանկային ծառայություններից, ստանում են՝

Անվճար տեղեկանքներ եւ քաղվածքներ,

Ճամփորդական ապահովագրություն,

Concierge ծառայություն,

Պրեմիում քարտերով հասանելի զեղչեր եւ արտոնություններ տեղական եւ միջազգային առեւտրի եւ սպասարկման կետերում, այդ թվում՝ ավտովարձույթից եւ այլ ճամփորդական ծառայություններից օգտվելիս:

C360-ը ոչ թե ավանդական բանկինգ է, այլ համալիր ծառայությունների փաթեթ, այդ թվում՝ հարմարավետությունը նախընտրողների համար:

Conversebank.am, 010 511 211

*Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից*

ԼՈՒՐԵՐ

## UNILEVER-Ը ԴԱԴԱՐԵՑՐԵԼ Է

Համաշխարհային խոշոր ընկերություն Unilever-ը որոշել է ժամանակավորապես դադարեցնել նոր աշխատակիցների ընդունումը՝ Մերձավոր Արեւելքում, մասնավորապես Իրանի շուրջ զարգացող պատերազմի հետեւանքով աճած ռիսկերի պատճառով: Այս մասին հայտնում է Reuters-ը՝ հղում անելով ընկերության ներքին փաստաթղթին: Ըստ աղբյուրի՝ սահմանափակումը կգործի առնվազն երեք ամիս, սակայն հակամարտության շարունակման դեպքում ժամկետը կարող է երկարաձգվել: Որոշումը վերաբերում է ընկերության բոլոր ստորաբաժանումներին ամբողջ աշխարհում եւ պայմանավորված է ծախսերի աճի ու տնտեսական անորոշության հետ: Unilever-ում ընդգծել են, որ ներկայիս աշխարհաքաղաքական իրավիճակը լուրջ մարտահրավերներ է ստեղծում բիզնեսի համար: Ընկերությունը, որն ունի շուրջ 96 հազար աշխատակից, վերջին տարիներին արդեն իրականացնում է ծախսերի օպտիմիզացիա եւ նախատեսում է մինչեւ 2027 թվականը խնայել մոտ 800 միլիոն եվրո՝ նաեւ աշխատատեղերի կրճատման հաշվին:

## ԲԵՆԶԻՆԻ ԳԻՆԸ՝ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ

ԱՄՆ-ում բենզինի միջին գինը գերազանցել է մեկ գալոնի համար 4 դոլարը՝ հասնելով վերջին տարիների առավելագույն ցուցանիշին: Այս մասին հայտնում է The New York Times-ը՝ ընդգծելով, որ նման բարձր գներ չեն գրանցվել 2022 թվականի օգոստոսից ի վեր:Վերլուծաբանների տվյալներով՝ Մերձավոր Արեւելքում ընթացող պատերազմը շարունակում է ճնշում գործադրել շուկայի վրա. միայն փետրվարի վերջից գները աճել են շուրջ 35 տոկոսով: Փորձագետները զգուշացնում են, որ առաջիկա շրջանում թանկացումը կարող է շարունակվել՝ ավելի մեծ բեռ դնելով ամերիկացիների ծախսերի վրա:

Չնայած ԱՄՆ-ը ուղղակիորեն կախված չէ Մերձավոր Արեւելքից նավթի ներմուծումից, Հորմուզի նեղուցի փակման եւ նավթային օբյեկտների վնասման հետեւանքով համաշխարհային շուկաներում գների աճը ազդում է նաեւ ներքին շուկայի վրա: Միեւնույն ժամանակ, Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ Իրանի դեմ պայքարը առաջնային է՝ նույնիսկ վառելիքի թանկացման ֆոնին:

## «ՅՈՒՆԻԲԱՆԿ»

*«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարություն*

2026 թվականի ապրիլի 23-ին գումարվելու է «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով՝ համատեղ ներկայության կարգով իրական ժամանակի ռեժիմում Zoom հավելվածի միջոցով:

Մասնակիցների գրանցումը Երեւանի ժամանակով սկսած ժամը 14:00-ից, Ժողովի անցկացման սկիզբը ժամը 14:05-ին:

unibank.am | +374 10 71 22 22, +374 10 59 55 55

*Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից (Գ)*

*●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ՔՆՆԱՐԿՈՒՄ

# ՄՇԱԿՈՒՅԹԸ՝ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԽԹԱՆ

**ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը մասնակցել է «Հայաստանի զբոսաշրջությունը. որտեղ ենք եւ դեռ ինչ պետք է անել» թեմայով պանելային քննարկմանը, որը կազմակերպվել է Համաեվրոպական Executive MBA ծրագրի շրջանակում:**

Հանդիպման նպատակն էր բաց երկխոսության ձեւաչափով անդրադառնալ Հայաստանի զբոսաշրջության ներկային, զարգացման ռազմավարությանը, ենթակառուցվածքներին, ներդրումներին եւ կայուն զարգացման հեռանկարներին:

ԿԳՄՍ նախարարի տեղակալը շնորհակալություն է հայտնել Հայաստանի զբոսաշրջության զարգացման տեսլականը համատեղ ձեւակերպելու հնարավորության համար եւ խնդրին անդրադարձել ՀՀ մշակույթի զարգացման քաղաքականության տեսանկյունից:

«Վերջին տարիներին պետությունը կոնկրետ քայլեր է ձեռնարկել բաց եւ ներառական մշակութային միջավայր ստեղծելու ուղղությամբ: Պետական քաղաքականության հիմնական մոտեցումն այն է, որ մշակույթը պետք է ապակենտրոնացվի, եւ մշակութային կյանքին հաղորդակցման հավասար պայմաններ ապահովվեն ոչ միայն հանրապետության մեծ քաղաքներում, այլեւ բոլոր համայնքներում: Այդ համատեքստում հատկապես մեծ ուշադրություն ենք դարձնում համայնքային մշակութային նախագծերին, որոնք խրախուսում են բնակչության ներգրավվածությունը տեղական մշակութային կյանքի ձեւավորման գործում»,- ասել է Ալֆրեդ Քոչարյանը՝ թվարկելով մարզերում կազմակերպվող փառատոները, համերգային ծրագրերը եւ այլ միջոցառումները: Ներկայացնելով կատարված աշխատանքները՝ նա նշել է, որ պետությունը վերջին տարիներին իրականացրել է համակարգային բարեփոխումներ. ընդունվել են «Թանգարանների մասին» օրենքը եւ դրանից բխող ավելի քան երկու տասնյակ ենթաօրենսդրական ակտեր, որոնք ապահովում են ոլորտի լիարժեք կարգավորումը եւ կառավարման արդյունավետության բարձրացումը:

Ալֆրեդ Քոչարյանը կարեւոր ձեռքբերում է համարել նաեւ մշակույթի կառավարման արդիականացումը՝ շեշտելով, որ ներդրվել է թանգարանների միասնական էլեկտրոնային տոմսային համակարգը, որին արդեն միացած են տասնյակ թանգարաններ եւ դրանց մասնաճյուղերը: «Թանգարանների միասնական տոմսային համակարգը ոչ միայն բարելավում է այցելուների սպասարկումը, այլեւ ստեղծում է միասնական տվյալների բազա զբոսաշրջային հոսքերի վերլուծության եւ կառավարման համար»,- ասել է նա:

Որպես պետական քաղաքականության կարեւոր ուղղություն՝ նա նշել է մշակութային քաղաքականության միջազգայնացումը. վերջին տարիներին նախարարության ենթակայության թանգարաններն իրականացրել են տասնյակ միջազգային ցուցադրություններ, որոնցից առանձնահատուկ նշանակություն ունի Հայաստանի պատմության թանգարանում իրականացված «Մայր Աստվածություն. Անահիտից Մարիամ» միջազգային ցուցահանդեսը, որը կազմակերպվել է Բրիտանական թանգարանի հետ համատեղ: Ներկայում դեռ ընթանում է Հայաստանի պատմության թանգարանում կազմակերպված «Սրբազան երկխոսություն. Լուվրից Հայաստանի պատմության թանգարան» միջազգային ցուցադրությունը, որի շրջանակում առաջին անգամ Հայաստանում ներկայացված են Լուվրի թանգարանի հավաքածուներից տասնվեց ուշագրավ ցուցանմուշներ՝ համադրված Հայաստանի պատմության թանգարանի երկու տասնյակից ավելի արժեքավոր թանգարանային առարկաների հետ:

Նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանի խոսքով՝ Հայաստանի ազգային պատկերասրահն իրականացրել է «Հայկական իմպրեսիոնիզմի գույներն ու լույսերը» խորագրով ցուցահանդեսը՝ Ֆրանսիայի Բարբիզոնի «L'ESQUISSE» մշակութային կենտրոնում, իսկ Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանը Հայաստանում ԱՄՆ դեսպանատան հետ համագործակցությամբ իրականացրել է «Սարոյանական գույներ. բառերից անդին» միջազգային ցուցահանդեսը: ԿԳՄՍ նախարարի տեղակալի դիտարկմամբ՝ նշյալ միջոցառումների շրջանակում հազարավոր զբոսաշրջիկներ հնարավորություն են ունեցել ծանոթանալու հայկական մշակույթին:

Մշակութային քաղաքականության մյուս կարեւոր ուղղությունը, ըստ նախարարի տեղակալի, միջազգային կառույցների հետ համագործակցության զարգացումն է: Այդպիսով, հայկական մշակութային ժառանգությունը ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիաներով ստեղծված ցանկերում, եւ համալրման գործընթացը շարունակաբար իրականացվում է:

Ներկայում Համաշխարհային ժառանգության ցանկում Հայաստանը ներկայացված է հետեւյալ մշակութային ժառանգության օբյեկտներով՝

1. «Հաղպատի եւ Սանահինի վանքեր» (1996թ.)
2. «Էջմիածնի Մայր տաճար եւ եկեղեցիներ (Սբ. Հռիփսիմե, Սբ. Գայանե, Սբ. Շողակաթ) եւ Զվարթնոցի տաճարի հնավայր» (2000թ.)
3. «Գեղարդի վանք եւ Ազատ գետի վերին հովիտ» (2000թ.)

Համաշխարհային ժառանգության նախնական ցանկում են գրանցված հետեւյալ հայտերը՝

1. «Երերույքի բազիլիկը եւ հնավայրը» (1995թ.)
2. «Դվին քաղաքի հնավայրը/հնագիտական հուշարձանը» (1995թ.)
3.«Տաթեւի եւ Տաթեւի Անապատ վանքերը եւ Որոտանի դաշտավայրի հարակից տարածքները» (1995թ.)
4. «Նորավանքը եւ Ամաղու դաշտավայրի վերին հատվածը» (1995թ.)
5. «Տիրինկատար հնավայրի վիշապաքարերը եւ մշակութային լանդշաֆտը» (2024թ.)

«Երեւանի ուրարտական ժառանգությունը» (2025թ.)

6. «Գառնի հնագիտական համալիրը եւ Քարերի սիմֆոնիան» (2025թ.)

Քննարկմանը որպես բանախոսներ հանդես են եկել ՀՀ զբոսաշրջության կոմիտեի նախագահ Լուսինե Գեւորգյանը, ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Քրիստինե Ղալեչյանը, Executive MBA ծրագրի տնօրեն, Յորքի համալսարանի եվրոպական կամպուսի Բիզնես դպրոցի դեկան, պրոֆեսոր Լեսլի Սզամոզին, պաշտոնատար այլ անձինք:

OPERA EUROPA-Ի ԱՆԴԱՄ

Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնը դարձել է Opera Europa միջազգային հեղինակավոր կազմակերպության անդամ: Opera Europa-ը եվրոպական օպերային թատրոնների եւ փառատոների խոշորագույն մասնագիտական ցանցերից է, որը միավորում է ոլորտի առաջատար հաստատությունները՝ ձեւավորելով օպերային արվեստի զարգացման օրակարգը Եվրոպայում եւ դրա սահմաններից դուրս: «Մեծ ուրախությամբ հայտարարում ենք մեր ցանցին նոր անդամի՝ Հայաստանի օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի միանալու մասին: Opera Europa-ն ողջունում է հազարամյակների պատմություն ունեցող, հարուստ մշակույթով եւ երաժշտական խոր ավանդույթներով երկրին: Երեւանի սրտում հպարտորեն կանգնած այս շքեղ թատրոնը գտնվում է զարգացման նոր, կենսունակ փուլում՝ առաջ մղելով գեղարվեստական բարձր որակի իր առաքելությունը: Թե՛ Տիգրանյանի հուզիչ մեղեդիներով, թե՛ Խաչատրյանի բալետներով Հայաստանի մշակույթը հպարտությամբ հնչում է ողջ աշխարհում: Անհամբերությամբ սպասում ենք նոր համագործակցության արդյունքներին»,-նշված է կազմակերպության պաշտոնական հաղորդագրության մեջ:

Opera Europa-ին անդամակցությունը նոր հնարավորություններ է բացում միջազգային համագործակցության ընդլայնման, փորձի փոխանակման եւ հայկական օպերային արվեստը համաշխարհային հարթակներում առավել տեսանելի դարձնելու տեսանկյունից:

ՄԱՐԶԱԿԱՆ

## ՄԱՄՆԱԿՑԵԼ Է ՄՐՑԱՇԱՐԻՆ

Պրոֆեսիոնալ ֆուտբոլից հեռանալուց հետո Էդեն Ազարն ուժերը փորձում է տարբեր ոլորտներում ու այս անգամ նա լրատվամիջոցների ուշադրությունը գրավել է հեծանվավազքի մրցաշարում հաջող հանդես գալուց հետո:

Բելգիայի հավաքականի նախկին ավագը մասնակցել է Իսպանիայի Մալյորկայում անցկացված հեծանվավազքի միջոցառմանը՝ անցնելով 167 կիլոմետրանոց մրցուղին:

Սա առաջին դեպքը չէ, երբ նա հեծանվով ճանապարհ է դուրս եկել: 2024 թվականին նա եղբայրների հետ բարձրացել է Ֆրանսիայի հարավում գտնվող Վենտու լեռը, որը «Տուր դը Ֆրանս»-ի ամենահայտնի վերելքն է:

Ազարը նաեւ մասնակցում է ֆուտբոլային բարեգործական խաղերի, այդ թվում՝ 2024 թվականին «Ստեմֆորդ Բրիջ»-ում կայացած «Soccer Aid»-ին:

35-ամյա Ազարը «Չելսի»-ի կազմում խաղացել է 2012-2017 թվականներին եւ նվաճել վեց խոշոր գավաթ, այդ թվում՝ Պրեմիեր լիգայի երկու տիտղոս:

2017-ից «Ռեալ»-ի ֆուտբոլիստ էր ու թիմի հետ դարձել է Չեմպիոնների լիգայի հաղթող: 2023 թվականին հայտարարել է կարիերան ավարտելու մասին, երբ ընդամենը 32 տարեկան էր:

## ԿՄԱՍՆԱԿՑԻ 4 ՄԱՐԶԻԿՈՎ

Այս հանգստյան օրերին որոշվեցին Հայաստանի մարմնամարզության չեմպիոններն, ու արդեն ապրիլի 3-6-ը լավագույնները Կահիրեում կմասնակցեն Աշխարհի Գավաթի 4-րդ փուլին:

Այնտեղ ելույթ կունենան հենացատկում, օղակների վարժությունում ու զուգափայտում Հայաստանի չեմպիոն Արթուր Դավթյանը, նժույգթափերի հաղթող՝ Մամիկոն Խաչատրյանը, բազմամարտում հավասարը չունեցող Համլետ Մանուկյանն ու Արթուր Ավետիսյանը:

Հայ մարմնամարզիկները բաց են թողել Աշխարհի Գավաթի Բաքվի ու Անթալիայի փուլերը: Թուրքիա մեկնել չեն կարողացել, քանի որ մրցաշարի մեկնարկից առաջ հավաքի են մասնակցել Կատարում եւ Միջին Արեւելքում տիրող լարված իրավիճակի պատճառով չվերթները չեղարկվել էին:

Կահիրեից հետո Հակոբ Սերոբյանի թիմն ապրիլի 9-12-ը կմեկնի խորվաթական Օսիեկ՝ մասնակցելու Աշխարհի Գավաթի 5-րդ փուլին: Իսկ ապրիլի 15-18-ը Դոհայում նախատեսված վերջին փուլը չի կայանալու:

● *Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում ապրիլի 3-ին կկայանա «Գայանե» բալետը:*

# ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

## ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Ուզում եմ ծառայող եղբայրս ներկա լինի հարսանիքիս: Ո՞ւմ պետք է դիմեմ:**

*Իրինա Մուրադյան, 27 տարեկան*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Հարկ է արձանագրել, որ յուրաքանչյուր զինծառայող իրավունք ունի ներկա գտնվելու իր ընտանիքի անդամների հետ կապված այնպիսի կարեւոր իրադարձություններին, ինչպիսին է, օրինակ, հարսանիքը: Անհրաժեշտ է հարսանիքից առնվազն մեկ ամիս առաջ ներկայանալ այն զինվորական կոմիսարիատ, որտեղից Ձեր եղբայրը զորակոչվել է Զինված ուժեր: Ներկայանալով զինվորական կոմիսարիատ՝Դուք պետք է ներկայացնեք դիմում եւ դիմումին կից՝ անհրաժեշտ այն փաստաթղթերը, որոնք հավաստում են, որ զինծառայողը համարվում է Ձեր ընտանիքի անդամը, եւ Դուք ամուսնանում եք կոնկրետ ամսաթվի: Մասնավորապես, դիմումին կից պետք է ներկայացնել Ձեր եւ Ձեր եղբոր ծննդյան վկայականները եւ դրանց պատճենները, որոնցով կհաստատվի, որ ունեք միեւնույն ծնողները, այսինքն՝հանդիսանում եք եղբայրներ: Եթե արդեն իսկ ընտրել եք այն եկեղեցին, որտեղ պետք է պսակադրվեք, ապա պետք է նաեւ ունենաք պսակադրության օրվա եւ ժամի ամրագրման վերաբերյալ փաստաթուղթ՝ տրված եկեղեցու կողմից, որը եւս պետք է ներկայացնեք զինկոմիսարիատ: Բացի այդ, եթե արդեն իսկ դիմել եք քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասրմին (ՔԱԳՍ)՝ամուսնության գրանցման օր նշանակելու նպատակով, ապա նաեւ անհրաժեշտ է ներկայացնել նաեւ այդ դիմումի պատճեն, որով նախատեսել եք Ձեր ամուսնությունը գրանցել ինչ-որ կոնկրետ ամսաթվին: Բացի այդ, պետք է հայտարարություն վերցնեք Ձեր առնվազն երեք հարեւաններից, որոնք տեղյակ են եւ կարող են հաստատել, որ կոնկրետ ամսաթվի տեղի է ունենալու Ձեր հարսանեկան արարողությունը: Հայտարարությունը հարեւանների կողմից ստորագրելուց հետո այն հարեւանների անձնագրերի պատճենների հետ միասին պետք է ներկայացնեք համատիրություն՝ հարեւանների ստորագրությունները հաստատելու համար, իսկ եթե չունեք Ձեր հասցեն սպասարկող համատիրություն (օրինակ՝սեփական տուն է), ապա հարեւանների հայտարարությունը՝նրանց անձնագրերի պատճենների հետ միասին, պետք է ներկայացնեք վարչական շրջանի կամ համայնքի ղեկավարներին՝ խնդրելով հաստատել դրանք: Ընդ որում, անհրաժեշտ է հարեւանների հայտարարությունը ձեւակերպել երկու օրինակից, որոնցից մեկը պետք է մնա համատիրությունում կամ վարչական շրջանի եւ համայնքի ղեկավարի մոտ, իսկ մյուս օրինակը պետք է դիմումին կից ներկայացնեք զինկոմիսարիատ:

*ՀՀ զինված ուժեր*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Դիմումն ու անհրաժեշտ փաստաթղթերը զինկոմիսարիատ ներկայացնելուց հետո վերջինս համապատասխան հաղորդագրություն կուղարկի այն զորամաս, որտեղ ծառայում է Ձեր եղբայրը, որից հետո Ձեր հարսանեկան արարողության ամսաթվին կտրամադրեն լրացուցիչ արձակուրդ՝3-5 օր ժամկետով: Ընդ որում, զինծառայողին արձակուրդը կտրամադրեն Ձեր հասանիքին նախորդող օրը:

## ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՐՑ. Դպրոցի աշակերտն անընդհատ վիճում է, խանգարում դասապրոցեսը. ո՞ւմ կարող է դիմել ուսուցիչը, եւ ի՞նչ իրավունքներ նա ունի:**

*Հայկանուշ Սեդրակյան, 56 տարեկան*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Դպրոցներում երեխաների կարգապահությունն ապահովվում է օրենքով, ուսումնական հաստատության կանոնադրությամբ եւ ներքին կարգապահական կանոններով սահմանված կարգով: Յուրաքանչյուր դպրոց ունի իր ներքին կարգապահական կանոնները, որոնք չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում դպրոցի տնօրինությունը միջին եւ ավագ դպրոցների սովորողների նկատմամբ կարող է կիրառել բացառապես հետեւյալ կարգապահական տույժերը.

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն:

Վերոնշյալ կարգապահական տույժը մեկ ուսումնական տարվա ընթացքում նույն սովորողի նկատմամբ կրկնակի կիրառվելու դեպքում ուսումնական հաստատությունը կարող է՝

1) առաջարկել ծնողին սովորողին տեղափոխել այլ ուսումնական հաստատություն.

2) դիմել սոցիալական աջակցության բնագավառի լիազոր մարմնին՝ երեխային սոցիալական աջակցություն ցուցաբերելու առաջարկով:

Եթե աշակերտը վիճում է այլ աշակերտների հետ, վիրավորում է ուսուցչին կամ մշտապես խանգարում դասապրոցեսը, ապա ուսուցիչը պետք է աշակերտին ներկայացնի տնօրենին՝ ներկայացնելով զեկուցագիր կատարված միջադեպի մասին եւ խնդրելով աշակերտի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ կատարված իրավախախտմանը համապատասխան: Սովորողի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կարգապահական տույժը կարող է հանվել, եթե սովորողը կարգապահական նոր խախտում թույլ չի տվել եւ դրսեւորել է իրեն որպես բարեխիղճ, օրինակելի, կարգապահ սովորող: Ուսուցիչը կամ որեւէ այլ անձ իրավասու չէ դիմել ֆիզիկական կամ հոգեբանական բռնության՝ աշակերտի կարգապահությունը բարձրացնելու նպատակով:

*ԿԳՄՍ*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Դպրոցի տնօրենը կարող է դիմել տվյալ դպրոցը սպասարկող ոստիկանության տեսուչին՝ երեխային հաշվառման վերցնելու եւ նրա հետ աշխատանքներ իրականացնելու համար:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ shamshyan.com-ի*

Ավտովթար Երեւանում. «Nissan»-ը մասամբ հայտնվել է «Opel»-ի վրա:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| | | |
|---|---|---|
| | Շիրակ | - 2 - 7<br>+ 7 + 12 |
| | Կոտայքի լեռներ | - 2 - 6<br>+ 7 + 11 |
| | Կոտայքի նախալեռներ | 0 + 3<br>+11 + 14 |
| | Գեղարքունիք | - 2 - 7<br>+ 6 + 11 |
| | Լոռի | - 3 + 1<br>+ 11 + 16 |
| | Տավուշ | - 2 + 2<br>+12 + 16 |
| | Արագածոտնի լեռներ | - 2 - 7<br>+ 5 + 8 |
| | Արագածոտնի նախալեռներ | 0 + 4<br>+10 + 15 |

| | | |
|---|---|---|
| | Արարատ | + 2 + 5<br>+12 + 16 |
| | Արմավիր | + 2 + 5<br>+15 + 18 |
| | Վայոց ձորի լեռներ | - 2 - 6<br>+ 7 + 11 |
| | Վայոց ձորի նախալեռներ | + 2 + 5<br>+ 14 + 18 |
| | Սյունիքի լեռներ | - 1 - 6<br>+ 6 + 9 |
| | Սյունիքի նախալեռներ | 0 + 4<br>+13 + 16 |
| | Սյունիքի հովիտներ | + 4 + 8<br>+17 + 20 |
| | Երեւան | + 3 + 5<br>+14 +16 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **31.03.2026**
Տպաքանակ՝3968
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*